

«Հյուսիսային համալսարանում որակի բարելավման, որակյալ բարձրագույն կրթության ապահովման նպատակով ուսանողների կողմից դասախոսների դասավանդման որակի և արդյունավետության վերաբերյալ գնահատման» կարգի համաձայն դասախոսների դասավանդման որակի և արդյունավետության ուսանողների կողմից դասախոսների գնահատման ազդեցությունը Հյուսիսային համալսարանում իրականացվող գործընթացների վրա

Հյուսիսային համալսարանի Որակի ապահովման վարչության կողմից իրականացվող՝ Ուսանողների կողմից դասախոսների գնահատման արդյունքում կատարված բացահայտումները և վեր հանված խնդիրները մշտապես հիմք են հանդիսացել Համալսարանի կրթական գործընթացներում, ինչպես նաև կադրային քաղաքականությունում՝ պլանավորվող և իրականացվող բարեփոխումների համար: Հետազոտության արդյունքները և ուսանողների կողմից մատնանշած խնդիրները մշտապես եղել են ուշադրության կենտրոնում արձագանքներ են ստացել համալսարանի ղեկավար և վարչական կազմի, մասնավորապես ռեկտորի, պրոռեկտորների, դեկանատների կողմից:

Ձեզ ենք ներկայացնում որոշ կարևոր գործընթացներ, որոնք անմիջապես բխել են վերոնշյալ հետազոտության արդյունքում վեր հանված խնդիրների լուծման անհրաժեշտությունից:

- 2017-2018 ուս տարվա գնահատման արդյունքները վերլուծվել են ամբիոններում և խմբակային հարցերի վերաբերյալ ներքին քննարկումների, ամբիոնային նիստերում:
- Հաջորդիվ կայանալիք գնահատումների առդյունքները հիմք են հանդիսացել լավագույն ամբիոնների, լավագույն դասախոսների որոշման գործընթացներում:
- Գնահատման արդյունքները ներկայացվում են ամբիոններին և դեկանատներին և քննարկումների նյութ են հանդիսանում ինչպես ամբիոնի նիստերի, այնպես էլ ուսումնամեթոդական խորհուրդների ընթացքում:
- Հաճվետու ժամանակաշրջանում գնահատման արդյունքում գործել են խրախուսման մեթոդներ, ուղեկցվելով հավաստագրերով, շնորհակալագրերով ինչպես նաև ֆինանսական պարգևներով:
- Գնահատման արդյունքների հիման վրա առարկայական ծրագրերում իրականացվում են բարեփոխումներ, որոնք ենթադրում են առարկայի տարբեր բաժինների դասավանդում համապատասխան նեղ մասնագետների կողմից և օպտիմալացում:
- Գնահատման արդյունքում որոշ ամբիոններ, որտեղ սկսվել են կրթական գործընթացի բազմակողմանի ստուգումներ հատուկ այդ նպատակով կազմված հանձնաժողովների կողմից: Այդպիսի ստուգումներ արդեն իսկ իրականացվել են մի շարք ամբիոններում:
- Խնդրահարույց հարցերի շրջանակում, կազմակերպվել են վերապատրաստումներ, թրեյնինգներ և փորձի փոխանակման միջոցառումներ:
- Միևնույն ժամանակ սկսվել են գնահատման նոր ավելի արդյունավետ համակարգերի մշակման և ներդրման գործընթացներ:

- 2019-2020 ուս տարվա ընթացքում դասախոսների որակավորման հանձնաժողովը, հիմք ընդունելով՝ Ուսանողների կողմից դասախոսների գնահատման ընթացքում ստացած ցածր գնահատականները հետագա վերընտրության և դասախոսական գործունեությունը շարունակելու համար չի երաշխավորել երկու դասախոսի :
- Գնահատման արդյունքները հիմք են հանդիսանում Հյուսիսային համալսարանի Որակի ապահովման վարչության կողմից կրթության ոլորտում իրականացվող այլ հետազոտությունների և ուսումնասիրությունների համար:

**Համեմատական վերլուծություն
2017-2018,2018-2019,2019-2020 ուս տարիների
Ուսանողների կողմից դասավանդման որակի եւ
արդյունավետության վերաբերյալ դասախոսների գնահատման
արդյունքների**

Գնահատումն այն հիմնական գործընթացներից է, որը թույլ է տալիս ապահովել մշտական և անխափան կապը համալսարանի կառավարման և հիմնական շահառուների, այն է՝ ուսանողների միջև:

